ՀՀ Արագածոտնի մարզպետարան
2019թ. հոկտեմբերի 28 ժամը 16[00]

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Արագածոտնի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստ

Նիստի օրակարգում քննարկվում է երկու հարց՝

1. **Մարզում համընդհանուր ներառական կրթության ներդրման համար իրականացված աշխատանքների և առաջացած խնդիրների վերլուծություն**

Զեկուցող՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Ռ.Նալբանդյան

2. **Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը մարզում**

Զեկուցող՝ ՀՀ զբաղվածության պետական գործակալության Աշտարակի տարածքային կենտրոնի տնօրենի ժ/պ Ջ.Սիմոնյան

3. **Քննարկումներ և ամփոփում**

Նիստը վարում է հանձնաժողովի նախագահ ՀՀ Արագածոտնի մարզպետ Դ.Գևորգյանը:
Նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամները, հրավիրվածներ:

Հանձնաժողովի անդամներ՝

Դ.Գևորգյան - ՀՀ Արագածոտնի մարզպետ /հանձնաժողովի նախագահ /
Ն.Դավթյան- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ / հանձնաժողովի քարտուղար/
Ռ.Նալբանդյան- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Մ.Շահազիզյան- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության առողջապահության բաժնի պետ
Ա.Դավայան- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ /փոխարինում է վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջին կարգի մասնագետ Ա.Ավագյանը/
Հ.Ասատրյան- մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Ն.Գալստյան- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ժ/պ
Կ.Թաթուլյան- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ

Ա.Մովսիսյան- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Հովհաննիսյան- <<Ծիծեռնակ>> հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ
Ա.Աբգարյան- <<Թալին հույս>> հասարակական կազմակերպության նախագահ
Ս.Այվազյան- <<Հայաստանի կույրերի միավորման>> Աշտարակի կույրերի սկզբնական կազմակերպության նախագահ
Ժ.Ավետիսյան- <<Արայի>> հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ

Հրավիրվածներ՝

Ս.Սարդարյան- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Եղիազարյան- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ
Գ.Աղաբաբյան- ՀՀ Արագածոտնի մարզի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն
Ջ.Սիմոնյան- ՀՀ զբաղվածության պետական գործակալության Աշտարակի տարածքային կենտրոնի տնօրենի ժ/պ
Վ.Հայրապետյան- ՀՀ զբաղվածության պետական գործակալության Թալինի տարածքային կենտրոնի տնօրեն
Ա.Հունանյան- ՀՀ զբաղվածության պետական գործակալության Ապարանի տարածքային կենտրոնի տնօրեն
Ն.Ավետիսյան- ՀՀ զբաղվածության պետական գործակալության Ծաղկահովիտի տարածքային կենտրոնի տնօրեն

Օրակարգի առաջին հարցի շուրջ զեկուցող Ռ.Նալբանդյանը ներկայացրեց մարզի հանրակրթական համակարգում ներառականություն ապահովելու գործընթացում իրականացրած աշխատանքները: Այս ընթացքում վերակազմավորվել է Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցը որպես տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն: Հատուկ դպրոցում սովորող 32 աշակերտների համար կատարվել է ֆունկցիոնալ գնահատում և վկայագրվել է նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը՝ համայնքների դպրոցներում սովորելու համար: Համայնքների դպրոցներ տեղափոխված երեխաներից ինտեգրման խնդիր է ունեցել Կարինի միջնակարգ դպրոց հաճախող մեկ երեխա: Այդ հարցը կարգավորվել է մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության, ԸԿԵԻՊ բաժնի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի համատեղ աշխատանքի շնորհիվ: Նոր ուսումնական տարում մարզում կա կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը հավաստող վկայագիր ունեցող 95 աշակերտ, որոնցից 5-ի համար կազմակերպվել է տնային ուսուցում: Դպրոցներում կատարվել է մասնագիտական ռեսուրսների /հոգեբան, լոգոպեդ, սոց. մանկավարժ, ուսուցչի օգնական/

համալրում: Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից իրականացվել է ուսուցիչների մասնակի վերապատրաստում և անհատական ուսուցման պլանի մշակման ուսուցում: 2019-20 ուս. տարվա ընթացքում ֆունկցիոնալ գնահատման են ենթակա 382 առողջական խնդիր ունեցող երեխաներ: Դեռևս խնդիր է մնում ներառական դպրոցների մատչելիությունը հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների տեղաշարժման համար. սանհանգույցները հարմարեցված չեն, չունեն հարմարեցված սպորտդահլիճներ, դասասենյակներն ապահովված չեն անհրաժեշտ գույքով: Մասնավորապես, վերակառուցվել է Մուղնու հիմնական դպրոցի մուտքի թեքահարթակը, կառուցվել է թեքահարթակ Աշտարակի Վ.Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի մուտքի մոտ:

Օրակարգի երկրորդ հարցի զեկուցմամբ հանդես եկավ զբաղվածության պետական գործակալության Աշտարակի տարածքային կենտրոնի տնօրենի ժ/պ Ջ.Սիմոնյանը: Նրա ներկայացմամբ նվազել է աշխատանք փնտրողների թիվը: Աշխատանք փնտրողների /Աշտարակի տարածաշրջան՝ 2183 մարդ/ մեջ նախկինում գերակշռել է կանանց թիվն, իսկ այժմ գերակշռող է տղամարդկանց թիվը, նրանցից 59-ը հաշմանդամություն ունեցող անձինք են, որից գործազուրկ են՝ 35-ը: 2019 թվականին աշխատանքի է ընդունվել 351 անձ, որից 6-ը հաշմանդամություն ունեցող անձինք են: Միաժամանակ նշվեց, որ որոշ գործատուներ աշխատավարձի մասնակի՝ 50% փոխհատուցման դեպքում հրաժարվում են աշխատանքի ընդունել հաշմանդամություն ունեցող անձանց, քանի որ հաշմանդամություն ունեցող անձն ընդունվում է աշխատանքի նույն չափորոշիչներով, նրա համար անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային հատուկ պայմաններ և արդյունքում աշխատանքի օգտակար գործողության գործակիցը ցածր է:

Հանձնարարականներ՝

Հանձնաժողովի նախագահ ՀՀ Արագածոտնի մարզպետ Դ.Գևորգյանը, կարևորելով ներառական կրթության համար մասնագիտական ռեսուրսի համալրման հարցը, մարզպետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ Ռ.Նալբանդյանին և տարածքային հոգեբանամանկավարժական աջակցության կենտրոնի տնօրեն Գ.Աղաբաբյանին հանձնարարեց ավելի արդյունավետ կազմակերպել ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները:

Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Դավայանին հանձնարարեց վերանայել թեքահարթակների և սանհանգույցների ընդունված չափորոշիչներին չհամապատասխանելու փաստը և անհրաժեշտության դեպքում չուշացնել թեքահարթակների կառուցումը:

Զբաղվածության ոլորտում բարեփոխումներ ունենալու համար անհրաժեշտ են օրենսդրական կարգավորումներ, որի համար հանձնարարվեց առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը:

Հանձնաժողովի նախագահ՝ /Դ.Գևորգյան/

Հանձնաժողովի քարտուղար՝ /Ն.Դավթյան/